



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՅԻՒՍԻՍԱԿԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ ՀՈՎԻԼՆԵՐՈՒ, ԱՉԳ. ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու Ազգային Վարչութեան հրաւերով, Երեքշաբթի, 15 Յուլիսի Երեկոյեան, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան Եւ Զարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիպում-համագումար մը, որուն մասնակցեցան ծիսական շրջաններու Հոգեւոր Հովիլներ, հոգաբարձական կազմեր ու Ազգ. Երեսփոխանական ժողովի անդամներ:

Հանդիպումը հրաւիրուած էր խորհրդակցելու համար հասարակաց հարցերու, կարեւոր իրազորումներու եւ այդ ճամբով շահուած փորձառութիւնները բաժնեկցելու մտասեւեռումով:

Երեկոն բացուեցաւ հաւաքական աղօթքով եւ Առաջնորդ Սրբազանին ողջոյնի ու օրինութեան խօսքով: Ներկայ էր Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիմեան: Իսկ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը պատրաստած էր պատշաճ հիւրասիրութիւն:

Բացման իր խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը կանգ առաւ շարք մը ծրագիրներու եւ նախատեսութիւններու վրայ, որոնք հաւաքական աշխատանք ու համակարգում կ'ենթադրեն: Անոնց շարքին են Ամերիկայի մէջ Կիլիկեան Ս. Աթոռի ծառայական կեանքին 50րդ տարեդարձը, մեր Թեմի 35ամեակը եւ Վեհափառ Հայրապետին կողմէ հռչակուած՝ Քրիստոնեական Դաստիարակութեան տարուան առիթով դասախոսական եւ այլ ձեռնարկները: Ան յիշեցուց, որ աշխատանք կը տարուի նաեւ նոր Երկրորդական վարժարանի մը հաստատման նպատակով, Երիտասարդական միութեանց ու կիրակնօրեայ վարժարաններու գործունեութիւնները յառաջ կը տարուին միացեալ ճիգերով, իսկ Ազգ. Առաջնորդարանի պատկերասփիւրի կիրակնօրեայ ծրագիրը հարստացած է նոր Եցերով, որոնք կը նպատակադրեն մեր հաւատացեալ ժողովուրդին ծանօթացնել մեր հոգեւոր ժառանգութիւններն ու զանոնք կերտող սրբազան հայրերը:

Ողջոյնի խօսք արտասանեց Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքք. Կարօ Յակոբեան, որ ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց քննարկելի հասարակաց հարցերը, ծիսական աշխատանքներու աւելի եւս աշխուժացման հրամայականը, կարեւորութեամբ շեշտելով որ հանդիպումին նպատակներէն մէկն ալ, տարբեր շրջաններու իւրայատուկ իրագործումները հաւաքական փորձառութեան վերածելու առաջադրանքն է:

Նկատի ունենալով, որ Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն մայր Եկեղեցւոյ ծխական համայնքը՝ մեր Թեմի անդրանիկ շրջանը ունի բազմամեայ իւրայատուկ փորձառութիւն մը՝ ընտանեկան համագումարներու կազմակերպումը, ծխական շրջանի հոգաբարձութեան ատենապետ Տիար Տէյվիտ Սրապեան հրաւիրուեցաւ զեկուցելու այդ աշխատանքին կազմակերպական մանրամասնութեանց ու մասնաւանդ անկէ ձեռք բերուած արդիւնքներուն մասին: Նմանօրինակ զեկուցումներով ներկայացան նաեւ ծխական այլ շրջաններու հոգաբարձութեանց ատենապետները՝ Տէարք Չարեհ Մարգարեան (Կլենտէյլ), Յակոբ Ետալեան (Փասատինա), Տիգրան Տէր Սարգիսեան (Ջրեսենթա Հովիտ) եւ ուրիշներ: Խօսք առին նաեւ Տիար Խաժակ Տիքինեան, Գերա. Տ. Միւռոն Շ. Վրդ. Ազնիկեան եւ Ազգ. Վարչութեան անդամներէն Տիար Ներսէս Մելքոննեան, որոնց օգտակար ու գործնական թելադրանքներ ներկայացուցին ժողովականներուն:

Մօտաւորապես երկու ժամուան վրայ երկարած խորհրդակցական այս հանդիպումը եղաւ միտքերու սրտբաց փոխանակման առիթ: Փափաք արձանագրուեցաւ, որ նման հանդիպումներ ըլլան աւելի յաճախակի ու արձանագրուած առաջադրանքներու իրագործման ընթացքը գնահատելու հանգրուաններ:

Հանդիպումը վերջ գտաւ ժամը 9:40ին, Առաջնորդ Սրբազնին փակման եւ օրինութեան խօսքով ու «Պահպանիչ»ով:

CONFERENCE FOR PRELACY PASTORS, DELEGATES, AND BOARD OF TRUSTEES

On the evening of Tuesday, July 15th, Pastors, Delegates, and Board of Trustees of Prelacy Churches gathered at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall, upon the invitation of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council, to discuss issues concerning our parishes and to share their experiences. Central Executive Council member Mr. Khajag Dikijian was also present at the conference, which was hosted by the Ladies Auxiliary.

The conference started with prayer and welcoming remarks by the Prelate. The Prelate called attention to upcoming events which will rely on collaborative efforts such as the 50th anniversary of a Prelacy in North America under the jurisdiction of the Holy See of Cilicia, the 35th anniversary of the Western Prelacy, and the observance of the Year of Christian Education through various events. The Prelate also noted that work continues in the establishment of a new high school, that the activities of our youth groups and Sunday Schools are undergoing expansion, and that the weekly television program was recently enhanced to include a segment through which are faithful can learn about the rich history and traditions of the Armenian Church.

Executive Council Chairman Dr. Garo Agopian, in his remarks, outlined the issues to be discussed and explained the purpose of the meeting, which was to exchange ideas and suggestions.

Mr. David Sarabian, Chairman of Holy Trinity Church of Fresno, was then invited to report on the endeavors they have undertaken and their outcomes, specifically the organizing of family retreats, which is unique to their parish. The chairmen of the other churches were in turn invited to report on their specific parishes. Remarks were also offered by Mr. Dikijan, Very Rev. Fr. Muron Aznikian, and Executive Council member Mr. Nerses Melkonian, all of whom presented practical suggestions to the parishes' representatives.

At the conclusion of the conference, the participants expressed interest in having similar meetings on a regular basis. The evening came to a close with the Prelate's blessings and benediction.